ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------5

2. Դպրոցի բնութագիրը եվ առկա իրավիճակը ----------14

3. Կառավարման եվ խորհրդակցական մարմիններ----------15

4. Նպատակներն՝ ըստ ոլորտների ----------17

5. Ուսումնական միջավայր ----------19

6. Աշխատակազմ ----------23

7. Սովորողներ ----------25

8. Վերահսկողություն ----------26

9. Դպրոցի տնօրենի անձն ու անհատականությունը ---------- 28

10. Դպրոցի հիմնախնդիրներն ու դրանց լուծումները

10.1. Առողջ ապրելակերպ ---------- 29

10.2. Գնահատման համակարգը դպրոցում ---------- 31

10.3. Կրթության բովանդակության որակյալ յուրացումը դպրոցում ----------33

10.4. Դաստիարակչական համակարգը դպրոցում ----------34

10.5. Դաստիարակությունը և ազգային արժեհամակարգի ձևավորումը դպրոցում--36

10.6. Ուսուցչի անձի մոդելը դպրոցում---------- 38

10.7. Դպրոց-ընտանիք կապի ապահովումը----------40

11. Զարգացման ծրագրի առկա հիմնախնդիրները, լուծման ուղիները, ժամանակացույցն ու պատասխանատուները ---------- 49

12. Նպատակի եվ խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր ռիսկերը ---------- 49

13. Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ եվ անհատներ, բյուջե ----------50

14. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքները -------51

15.Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը-52

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն է պետության գլխավոր հենասյունը, նրա ապագայի առհավատչյան, ուստի այդ գլխավոր հենասյանը վերաբերող նույնիսկ չնչին հանգամանք պետք է լինի ուշադրության կենտրոնում, առավել ևս զարգացման ծրագիր: Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը: Եթե դպրոցի տնօրենը չունի դպրոցի զարգացման տեսլական, ապա անօգուտ է և անիմաստ այդ պաշտոնին ձգտելը:

Մենք ապրում ենք գլոբալացվող և սրընթաց զարգացումների աշխարհում, այն, ինչը նոր էր երեկ, վաղը դառնում է հնություն: Նոր ժամանակների առանձնահատկություններից մեկն այն է, որ իրականության բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են. մեր աչքի առաջ հնանում են գիտելիքները, տեխնիկան, աշխարհի մասին պատկերացումները, փոփոխվում են բարոյական նորմերն ու բարքերը: Մարդը բառացիորեն հայտնվել է տեղեկատվական հեղեղում, որի հորձանքներին դիմակայելը դարձել է կենսական խնդիր: Այս պայմաններում սովորողներին հաղորդել որոշակի գիտելիքների գումար և ձևավորել ինչ-ինչ կարողություններ, միանգամայն անօգուտ է: Անհրաժեշտություն է առաջանում նախևառաջ սովորողների մեջ ամրապնդել այն համոզմունքը, որ հասարակության ակտիվ անդամ դառնալու և տարազան գործընթացներից անմասն չմնալու համար նրանց հարկավոր է ամբողջ կյանքում սովորել: Եվ դպրոցի խնդիրն է աշակերտի մեջ ձևավորել նրա շարունակական կրթության հնարավորությունն ապահովող անձնային և ինտելեկտուալ որակներ: Մենք տեսնում ենք, որ աննկատելիորեն փոխվում է կրթվածության երբեմնի ըմբռնումը: Կրթված մարդն այլևս նա չէ, ով ինչ-որ բան գիտի կամ գիտեցածը կարող է կիրառել իրականության մի նեղ ոլորտում, այլ նա, ով ընդունակ է ինչ-որ բան իմանալու: Այսինքն՝ գնահատվում է ոչ այնքան ուսյալությունը, որքան ուսանելիությունը՝ մարդու սովորելու, ոչ ստանդարտ իրավիճակներից գլուխ հանելու, նրանցում արդյունավետ գործելու ունակությունը:

Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն, ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ:

Գլոբալացվող աշխարհում մարդկանց միջև շփումներն առավել ինտենսիվ են դառնում: Փոխադարձ կապեր ու հարաբերություններ են ստեղծվում աշխարհի տարբեր տնտեսական, ռազմական, գիտական ու կրթական հաստատությունների միջև: Այս իրողությունը հանրակրթությանը պարտադրում է ուշադրության կենտրոնում պահել սովորողների հաղորդակցական պատշաճ կարողությունների ձևավորման խնդիրը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ: Ինչպես նաև ինքն իրեն, իր դասարանը, դպրոցը, հայրենիքը ներկայացնելու, նամակ, դիմում գրելու, անկետա լրացնելու, հարցեր տալու, երկխոսություն վարելու, ինքն իրեն տիրապետելու հմտություններ: Տեղյակ լինել մենախոսության, երկխոսության և ոչ խոսքային հաղորդակցության ձևերին ու մեթոդներին: Կարողանալ լսել խոսակցին, հարգանք ու հանդուրժողականություն դրսևորել այլոց կարծիքների հանդեպ, կարողանալ մատչելի ու պարզ ներկայացնել սեփական տեսակետը, գրագետ լուծել ծագող կոնֆլիկտները, դառնալ որոշակի արժեհամակարգի կրող և այլն: Այսօրինակ որակների ձևավորվման համար ուսուցչից պահանջվում է սովորողների հաճախակի ներգրավում խմբային աշխատանքներում, բանավեճերի, դիսպուտների, ուսումնական սեմինարների, դերային խաղերի կազմակերպում, այսինքն կրթության որակի բարձրացում: Ուստի մեր զարգացման ծրագրի նպատակն է դպրոցը դարձնել այնպիսի միջավայր, որը կպատրաստի պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորմանը:


ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹ ՅՈՒՆԸ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ՆԵՐԸ
ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒ ԹՅՈՒՆԸ
ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԲՅՈՒՋԵ
ՌԻՍԿԵՐ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒ ԹՅՈՒՆԸ

2. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀՀ Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անժամկետ գրանցված է պետական ռեգիստրի *ԱՆԻ Տ/Բ* կողմից: Հիմնադրվել է 1896 թվականին, նոր շենքը կառուցվել է 1981 թվականին և վերանորոգվել 2012 թվականին:

Գրանցման համար՝ 48.210.00179

Գրանցման տարի՝ 04.02.2003թ.:

Հասցե՝ 4Փ./Շ/31 ՇԻՐԱԿԱՎԱՆ 2909 ԱՆԻ, ՇԻՐԱԿ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս՝ 077333237

Էլեկտրոնային հասցե՝ shirakavan77@mail.ru , shirakavan@schools.am ,

shirakavan.dproc@gmail.com

Աշխատողներ՝ 28

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային

Տնօրենի պարտականությունները կատարող՝ Մ.Բալոյան

Դպրոցի մուտքերի թիվը՝ 3

Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ, կրթության հավասար իրավունքը,ինչպես նաև համընդհանուր ներառական կրթություն,ներառված են 4 սովորող: Սեպտեմբերից դպրոցն ունի հոգեբան՝ համապատասխան որակավորմամբ:

2023թ հերթական վերապատրաստման մասնակցել և ատեստավորվել են 5 ուսուցիչ:

Կամավոր ատեստավորում՝ հ.լեզու և գրականության ուսուցիչը՝ 40 % հավելավճար,ֆրասերենի ուսուցիչը՝ 30% հավելավճար,ռուսաց լեզվի և ֆիզիկայի ուսուցիչները ապահովել են անցողիկ միավորներ, մաթեմատիկայի ուսուցիչը հաջորդ տարի ենթակա է պարտադիր ատեստավորման:

Դպրոցի շենքի տիպը՝ տիպային

Հարկայնությունը՝ երկհարկանի

Ջեռուցման եղանակը՝ լոկալ

Առանձնասենյակների թիվը՝ 2

Դասասենյակների թիվը՝ 12

Լաբորատորիա՝ 0

Առարկայական սենյակ /կաբինետ՝

Նախնական զինպատրաստության՝ 1

Հրաձգարան՝ -0

Համակարգչային կաբինետ՝ արմաթ-1

Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է

Բացօթյա սպորտհրապարակ՝ 1

Մարզադահլիճ՝ 1

Արհեստանոցներ՝ 0

Բուժկետ՝ 0

Ճաշարան՝ առկա է

Հանդերձարան (ներ)՝ 1

Զուգարան (ներ)՝ 4

Տեխնիկական նշանակության այլ սենյակներ՝ 1

Մարզահրապարակ(ներ)՝ առկա է

Համակարգիչներ՝ 2

Համակարգչային այլ տեխնիկա՝ 3

Հեռախոսներ՝ 0

Գրադարան (ներ)՝ առկա է

Գրադարանի ֆոնդը՝ գեղարվեստական և մեթոդական գրականություն՝ 5796,

Աշխատողների թիվը՝ 29

Վարչական աշխատողների քանակը՝ 5

Դասարանների թիվը՝ 11

Նախակրթարան՝17 սան

Աշակերտների թիվը 2023-2024 ուստարում ըստ կիսամյակների՝ 1-ին կիսամյակ, այս պահի դրությամբ՝ 84 (43 աղջիկ և 41 տղա)։

Աշակերտներից 4-ը ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿՈՒ)։

Դպրոցն ունի առարկայական 3 մասնախումբ.



Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը (դրույքը)
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Տնօրեն	1-1
Տնօրենի տեղակալ	0,75-1
Վարչատնտեսական մասի համակարգող	1-1
Հաշվապահ	1-1
Ընթացիկ վերանորոգող	0,75-1
Ընդամենը	
ՈՒՍՈՒՄՆԱ-ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Զինղեկ	1-1
Քաղպաշտպանություն	0,25-1
Համակարգ. օպերատոր	0,75-1
Գրադարանավար	1-1
Մասնագիտացված կրթ.աջակց.գծով համակարգող	0,75-1
Հոգեբան	0,75-1
Սոց. մանկավարժ	0
Ուսուցչի օգնական	0,7-1
Ընդամենը	
ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Հավաքարար	2-2
Գործավար	0
Հնոցապահ	1-1
Խոհարար	0,25-2
Պահակ	0,75-1

Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը.

	25-29	30-39	40-49	50-59	60 և ավելի	Ընդամենը

2018-2019	2	7	4	2	3	18
2019-2020	3	8	4	2	3	20
2020-2021	3	8	4	2	3	20
2021-2022	3	8	5	3	2	21
2022-2023	3	9	5	2	2	221

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝

«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, « ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով:

Դպրոցին վերաբերվող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 08.06 2020թ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը» N 26 Ն հրամանով հաստատված հավելվածում ներառված փաստաթղթերն են՝

- Էլեկտրոնային դասամատյաններ,
- Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ,
- Սովորողի անձնական էլեկտրոնային գործ,
- Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան,
- Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան,
- Ավարտական պետական, ավարտական փոխադրական և գիտելիքների ստուգման արձանագրություններ,
- Էլեկտրոնային հաստիքացուցակ,
- Տարիֆիկացիոն մատյան,
- Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ,
- Մեթոդմիավորումների արձանագրությունների մատյան,
- Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան,
- Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով,
- Ներքին գնահատում,

• Հաշվետվություններ։

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

N	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ
1	Համակարգիչ Ա խումբ	2
2	Համակարգիչ Բ խումբ	1
3	Համակարգիչ CZC2106HSV	1
4	Մոնիտոր CNC14011NQ	1
5	Բազմաֆունկցիոնալ տպիչ CNC901LBKX	1
6	UPS 2147B400M787100361	1
7	Դյուրակիր համակարգիչ AcerAspire 3A315-56	1
8	Պրոյեկտոր OptomaW381	1
9	Նվագարկիչ Բարձրախոսով GEEPAS GMS8518	1
10	համակարգիչ բոլորը մեկումLENOVO IDEACENTRE3 24ITL6(13-1115G4)23.8 8 GB. 256GB SSD+KB/MOUSE(BK)(F0G00045RU	1
11	նոթբուք ASER ASPIRE3A315-59-50PS (i5-1235U)15.6 8GB512GB(SILVER)(NX K6SER 004)	1
12	USP (ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ)NJOYKEEN 600VA/ 360 W(UPLI-LI060KE- CG01B	1
13	Լազերային տպիչ	1
14	Համակարգչային մկնիկ	3
15	Կոմպլեկտ աշակերտական սեղան -աթոռ	55
16	Ուսուցչական սեղան	10
17	Գրապահարան	10
18	Գրատախտակ	10
19	Հեռուստացույց Горизонт	1
20	էլ. պլիտա	1
21	Կարի մեքենա ոտքի	4
22	Զուգափայտ	2
23	Նժույգ	1
24	Դաշնամուր կոմիտաս	1
24	Ակարդիոն	1
25	Պահարան երկաթյա	2
26	Գրքապահարան	2
27	Ուղեգորգ 2/3 չափի	1
28	Ուսուցչական սեղան	2
29	պահարան	2
30	Հեռուստացույց SENDO	1
31	Դիվիդի սարք SUPRA	1
32	Ուսուցչական սեղան	1
33	Լազերային տպիչ	1
34	Գեղարվեստական մեթոդ գրականություն	5796
35	Երաժշտական կենտրոն LG3500V	1
36	Աթոռ փափուկ	12
37	Մեծ բազմոց	1
38	Էլեկտրական սալօջախ 5004 э бел.	1
39	Ջրատաքացուցիչ ARISTON 80լ	1
40	Սեղան մետաղական 1200մմ*600մմ*0.8մմ հաստությամբ չ/պ	1
41	Չժանգոտվող պողպատից դարակներ 1200*500*1850	2
42	Ջրատաքացուցիչ դիսպենսեր 30լ ABAT KVE-30	1

43	լվացարան երկտեղանի չ/պ 1100*530*850մմ	1
44	Կենցաղային սառնարան 250-320լ POZIS	1
45	Մինի համակարգչի հավաքածու Mini PC RS Complex(Raspberry P 14 Model B 1GB.Raspberry P14 տուփ Fatnel USB-C PSU, Micro SD32GB, մալուխ0.5mHDMI to HDM	5
46	Համակարգչի հավաքածու (եռեչեփ տպիչի համար) PS 3D Complex (INTEL G 4900 < Asus h 310M-r, cooler, DR44Gb, SSD 120GB, իրան TOPCOOL Mini 450W ստեղն Defend)	1
47	Համակարգչի հավաքածու (շաղածային և լազերային հաստոցի) PC CNC COMPLEX (INTEL G 4900< gigabyte H310M DS2, coler, DDR4 4GB , SSD 120 GB, իրանTOPGOOL Mini 4)	1
48	Համակարգչային սեղան 1	1
49	Համակարգչային սեղան 2	1
50	Համակարգչային սեղան 3	6
51	Համակարգչային աթոռ	16
52	Եռաչափ տպիչ Բզեզ 2.0	1
53	Փոշեկուլ GOPENJE VC 1411	1
54	ռոբոտ- կոնստրուկտորի հիմնական հավաքածու	1
55	Նորոգման և գործիքների լրացուցիչ հավաքածու	1
56	Ռոբոտի մեխանիկական և էլեկտրոնային հանգույցների լրացուցիչ հավաքածու	1
57	Ավտոմատացման և էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	1
58	Թվային կառավարման շաղափային և լազերային հաստոց 1	1
59	Asus netbook	2
60	Irbris TZ897 պլանշետ	1
61	Մինի համակարգչի հավաք ածու Mini PC RS Complex(Raspberry P 14 Model B 1GB.Raspberry P14 տուփ Fatnel USB-C PSU, Micro SD32GB, մալուխ0.5mHDMI to HDM	5
62	Մարմնամարզական նստարան	2
63	Միկրոսկոպ	2
64	Գրքապահարան	2
65	Սետկա ֆուտբոլի	1
66	Հեռադիտակ	1
67	Պտտաձող	1
68	Գրասեղան երկու տումբայով	4
69	Մարմնամարզական այծիկ	1
70	Սեզան ճաշարանի	6
71	Աթոռ ճաշարանի	6
72	Կախիչ	1
73	Աշակերտական սեղան	6
74	Աշակերտական սեղան անհատական	12
75	Խաղային կլոր սեղան	2
76	Ուսուցչի աթոռ	2
77	Գրատախտակ	2
78	Ուսուցչի աթոռ	1
79	Աշակերտական երկտեղանոց սեղան -աթոռ	2
80	Փափուկ աթոռ	10
81	Փափուկ աթոռ (մեծ)	3
82	Տարրական դասարանների շախմատի գույք	6

83	Шкаф пекарский	1
84	Կշեռք Էլ. Կենցաղային սեղանի ШТРИХ М 7 Т	1
85	Պահարան	1
86	Մանկական զգեստապահարան	2
87	Աթոռ մանկական	25
88	Սեղան ուսուցչի	1
89	Աթոռ ուսուցչի	1
90	Սեղան մանկական	8
91	Կավրալիտ և կից մասեր	66
92	Կավրալիտ և կից մասեր	34
93	Սահարան	1
94	Շղթաներով փոքր ճոճանակ 2 տեղանոց	1
95	Ձսպանակով ճոճանակ 4 տեղանոց	1
96	Հրշեջի աշտարակ	1
97	Նստարան փայտ թիվ 5	1
98	Մանկական սպասք	25
99	LCD հեռուստացույց	1
100	Հեռուստացույցի տակդիր	1
101	DVDփլեյեր	1
102	Փոշեկուլ	1
103	Էլ. Ջեռուցիչ	2
104	Երաժշտական կենտրոն	1
105	Շերտավարագույր	12
106	Մանկական գրականություն	1
107	Դիտակտիկ խաղալիքներ	1
108	Կառուցողական խաղալիքներ	1
109	Խաղալիք զվարճալիքներ	1
110	Բազմոց երկտեղանոց մանկական	2
111	Սպորտային խաղալիքներ	1
112	Աշակերտական սողան աթոռ / 1 սեղան 2 աթոռ փոքր/	15
113	Աշակերտական սողան աթոռ / 1 սեղան 2 աթոռ միջին/	19
114	Աշակերտական սողան աթոռ / 1 սեղան 2 աթոռ մեծ/	14
115	Ուսուցչական սեղան	11
116	Ուսուցչական աթառ	11
117	Գրատախտակ	11
118	Կախիչ	11
119	Կախովի դարակ	2
120	Բանջարեղեն կտրատող սարք	1
121	Ձեռքերը չորացնելու սարք	3
122	Սեղան 4 տեղանոց	10
123	Աթոռներ ճաշարանի	40

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

	2021	2022	2023, 9ամիս
Տարեկան ֆինանսավորում	44791,2	46150,7	32786,6
Տարեկան աշխատավարձի ֆոնդ	40300	41726,8	28725,9
Տարեկան կոմունալ և այլ ծախսեր	3144,7	4638,7	4217,9
Գրքերի գումար	37,9	37,8	35,0
Ուսուցիչների միջին ամսական աշխատավարձ	145,6	146,5	192,9
Վարչական միջին աշխատավարձ	150	150	298,2

3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տնօրենի համագործակցությունը

Միացյալ կառավարման խորհուրդը բաղկացած է 19 անդամներից («Շիրակավանի միջն. դպրոց» ՊՈԱԿ, «Գուսանագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ, «Լանջիկի միջն դպրոց» ՊՈԱԿ), որը պատշաճ կերպով իրականացնում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունները: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում և մշտապես աջակցում է դպրոցի բոլոր նախաձեռնություններին: Առկա է մասնակցային կառավարման գործունեություն: Տնօրենի կողմից իրականացվող և վերահսկվող ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործմանը, կրթության որակի բարձրացմանը վերաբերվող առաջարկները ողջունվում են լիազոր մարմնի և կառավարման խորհրդի կողմից և ստանում աջակցություն: Տնօրենը խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհուրդում քննարկվում է նաև տարբեր ֆինանսական հարցեր, գտնում լուծման ուղիներ: Կառավարման խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի կատարումը, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման

մասին հաշվետվությունները: Խորհուրդը հաստատում է դպրոցի կազմակերպման կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները: Քննարկում է նաև ներքին և արտաքին գնահատման արդյունքները, իրականացնում կառուցվածքային և պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարումը: Կառավարման խորհուրդն ուսումնասիրել է հաշվապահական և կադրային նորմատիվները, աշխատողների դրույքաչափային ցուցակը, հաստիքացուցակը, որից հետո այն ներկայացվել է լիազոր մարմնի հաստատմանը: Լսել և հավանության է արժանացրել ներքին գնահատման հաշվետվությունը: Կառավարման խորհուրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը պետք է լինի կառուցողական, նպատակային, ի նպաստ դպրոցի:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1.Դպրոցն ունի առարկայական 3 մասնախմբեր, որոնք ամիսը մեկ, անհրաժեշտության դեպքում երկու և ավելի, գումարում են նիստեր, և քննարկում,կազմակերպում, են ուսումնադաստիարակչական աշխատանքներ և միջոցառումներ: 2. Դպրոցն ունի կառավարման խորհուրդ, մանակավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ և աշակերտական խորհուրդ, որոնք պարտաճանաճ կատարում են իրենց գործառույթները:	1. Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ : 2.Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև կապն ու համագործակցությունը թույլ է:

4. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ



ՆՊԱՏԱԿ

↓

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ, ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

↓

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները. շեշտը դնել հետևյալ ուղղությունների վրա	Ակտիվացնել ծնողական խորհրդի դերը	Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը	Մանկավարժական խորհրդի լիազորությունների գործնական կիրառում
1. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնին առաջարկություններ ներկայացնել դպրոցի զարգացման մասին	1. կազմակերպել հանդիպումներ և այդպիսով ամրապնդել ընտանիք-դպրոց կապը	1. կազմակերպել հանդիպումներ, զրույցներ և բանավեճեր և ցանկացած միջոցառումներ, որոնք կլինեն ի նպաստ անդամների ազատ մտածողության զարգացմանը, պատասխանատվության և արժեհամակարգի	1. Ուսուցիչների ծավալած գործունեության գնահատման, խրախուսման , աջակցման և ոգևորման նոր գործիքների կիրառում:

		ձևավորմանը:	
2. Ապահովել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի զարգացմանը նպաստող աշխատանքներին	2. Կազմակերպել միջոցառումներ ծնողների, աշակերտների, ուսուցիչների համատեղ մասնակցությամբ	2. ամրապնդել-դպրոց-ընտանիք-համայնք կապը	2. ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում դպրոցի զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացմանը
3.նյութատեխնիկական բազայի հարստացմանը նպաստող որոշումների ընդունում	3.ուսուցիչների և ծնողների կողմից երեխաների ուսուցման և դաստիարակության հարցում միասնական տեսլականի ձևավորում	3.ակտիվ, ազատ, ինքնակրթության կարևորությունը, արժեհամակարգի ձևավորման անհրաժեշտությունը գնահատող միջոցառումների իրականացում ողջ տարվա ընթացքում	3. ուսուցիչներին ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների բարելավմանը, նյութատեխնիկական բազայի համալրմանն ուղղված աշխատանքների կազմակերպմանը
4. ապահովել բոլոր խորհուրդների հետ սերտ համագործակցություն	4. խթանել հետաքրքիր նախաձեռնություններով և առաջարկություններով հանդես գալուն		4. ուշադրության կենտրոնում պահել մանկխորհրդի աշխատանքների ժամանակին կատարումը

Առաջիկա 5 տարիների ընթացքում դպրոցում անհրաժեշտ է ձևավորել հոգաբարձուների խորհուրդ: Դրա կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Դրա մեջ պետք է ներգրավել անհատ բարերարների, դպրոցի շրջանավարտների և կամավորների:

5.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Դպրոց հաճախող երեխայի համար ամենից կարևոր, վճռորոշ, մոտիվացնող միջավայրն է, ուստի այն պետք է լինի առանձնահատուկ։

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. Հոգատար և պրոֆեսիոնալ ուսուցչական կոլեկտիվ, 2. Գրադարանն ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրականությամբ, 3.ԿԱՊԿՈՒ երեխաները չեն մնում ստվերում և ստանում են անհրաժեշտ աջակցություն, 4. Իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ.	1.Շենքը հին է և շուտով կկառուցվի նորը, 2.չկան լաբորատորիաներ և մասնագիտացված դասասենյակներ, 3. առկա է միայն մեկ հանդեձարան, 4.չեն գործում խմբակներ, 5. ձմռանը դասասենյակները ջեռուցվում են միաժամանակ սալիքատաքացուցիչներով և դասասենյակներում ցուրտ է

ՆՊԱՏԱԿ

↓

ՍՏԵՂԾԵԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

↓

ԽՆԴԻՐՆԵՐ

↓

1.Մասնագիտական կաբինետների ստեղծում,

2. նյութատեխնիկական բազայի հարստացում,

3. արևային էներգիայի համակարգի ձեռքբերում,

4. խմբակների ստեղծում

5.ունենալ ամսագիր,

↓

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.մեթոդմիավորումների հետ բացել խմբակներ տարբեր ոլորտներից և այդպիսով նաև համալրել դպրոցի բյուջեն,

2.փորձել ստեղծել կամավոր ներդրողների միություն/ ծնողներից, շրջնավարտներից, համայնքից ուսումնական միջավայրն ավելի լավը դարձնելու համար:

3. աշակերտական խորհրդին հանձնարարել ամիսը մեկ պատրաստել ամսագիր, որտեղ նշված կլինի երեխաների հաջողությունները, որտեղ տեղ կգնեն երեխաների ստեղծագործությունները, որը կլինի մոտիվացնող և այդ ամսագիրը փոխանցել դասարաններին, որպեսզի բոլոր դասարաններն ընթերցեն:

4. Վերանայել միջոցառումների ցանկը, դրանք դարձնել հետաքրքիր և մոտիվացնող:

6.ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Տեղի ունեցող փոփոխությունները նոր պահանջներ են դնում ինչպես սովորողի, այնպես էլ ուսուցչի առջև:

Այդ պահանջներին համապատասխան, ուսուցման/դասավանդման մեթոդների փոփոխություններն անխուսափելիորեն առաջադրում են բազմաթիվ պահանջներ նաև ուսուցիչների պարտականությունների նկատմամբ:

Հանրակրթության պետական կրթակարգում նշվում է, որ գիտելիքներից զատ կարևոր է նաև սովորողի կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը: Այդ խնդիրը լուծելու համար ուսուցիչը պետք է՝

1. ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ,
2. գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում մասնակցության կարևորությունը,
3. հրաժարվի ժամանակավրեպ գործելակերպից,

4. կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները,
5. մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսուցիչը ստեղծագործող, արարող անձնավորություն է, որը միշտ շարժման, որոնումների, մասնագիտական զարգացման մեջ է: Նրա համար կարևոր է անընդհատ ինքնակատարելագործման և մասնագիտական աճի անհրաժեշտության գիտակցումը:

Կրթակարգում առանձնապես ընդգծվում է ուսուցիչների վերապատաստման ուսումնական ծրագրերի անհրաժեշտությունը, որի իրականացման արդյունքում ուսուցիչը պետք է ունենա.

1) իր աշխատանքը ծրագրելու կարողություն, այդ թվում՝

ա) առանձին դասընթացների, թեմատիկ գրավորների և դասերի պլաններ մշակելու,

բ) ուսումնական գործընթացն արդյունավետ պլանավորելու,

գ) արդյունավետ ուսուցման համար ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու:

2) ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողություն, այդ թվում՝

ա) անհատականացված ուսուցում իրականացնելու

բ) սովորողի տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսային առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժառիթներն ու վարքագիծը հաշվի առնելու,

գ) կրթության բովանդակության յուրացումն ապահովող ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդրելու,

դ) ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու:

3. Գնահաման կարողություն այդ թվում՝

ա) սովորողի առաջադիմության գնահատումը՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի շարունակական զարգացումն ապահովող միջոց:

4. Անդրադարձ (ռեֆլեքսիա) կատարելու կարողություն, այդ թվում ՝

ա) ուսուցման և դաստիարակության գործընթացին մշտական անդրադարձ կատարելու, սեփական աշխատանքի արդյունքները շարունակաբար գնահատելու, սեփական պլանները վերանայելու:

5) մասնագիտական զարգացման կարողություն, այդ թվում՝

ա) ինքնուրույն և գործընկերների հետ մասնագիտական նպատակային հետազոտություններ կատարելու, ամփոփելու և եզրակացություններ ներկայացնելու,

բ) սեփական մասնագիտական զարգացումը պլանավորելու և իրականացնելու:

Ուսուցչի գործունեությունը բարդ է և աշխատատար: Ուսուցչի մասին խոսելիս սովորաբար կարևորվում է նրա դերը հասարակության մեջ բարեփոխումներ իրականացնելու, մարդասիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ է նշվում ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությունը: Հատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի և երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը և մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային բարոյական, կամային որակները, ինչպիսիք են զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը և այլն:

Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարող է հանդիպել այսպիսի բնորոշումների.

● որոշում կայացնող,

● ուսուցմանն աջակցող (ֆասիլիտատոր)

● ուսուցման գործընթացին հետևող,

● ուսուցման ընթացքը գնահատող,

● անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաև այլ տեսանկյունից՝

● Արդարացի և անաչառ լինելը: Իր գործունեության ընթացքում ուսուցիչը պարբերաբար գնահատում է աշակերտներին և գնահատելիս ուսուցչի արդարացի լինելը ունի նաև դաստիարակչական նշանակություն:

● Պահանջկոտությունը, որը դրսևորվում է և՛ իր, և՛ իր աշակերտների նկատմամբ:

● Հումորի զգացումը: Իզուր չի ասվում, որ ուրախ և աշխույժ ուսուցիչն ավելի լավ է ուսուցանում, քան մռայլ ուսուցիչը: Հումորի զգացում ունեցող ուսուցիչը դասարանում ստեղծում է անմիջական, անկաշկանդ և բարյացակամ մթնոլորտ:

● Մանկավարժական տակտը: Այն աշակերտների նկատմամբ բարեկիրթ, չափավոր վերաբերմունքի դրսևորումն է, որի հիմնաքարը աշակերտի անձի նկատմամբ ունեցած հարգանքն է:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ նշվում է նաև ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ, ըստ որի ուսուցիչը պետք է՝

- ունենա աշխարհայացքային կողմնորոշում և հոգևոր բարձր արժեքներ,
- աշակերտի մեջ ձևավորի ամբողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության գիտակցումը,
- գիտակցի, որ ինքը դպրոցի անբաժան մասն է,
- ունենա անձնական պատասխանատվության զգացում,
- ունակ լինի մարդկանց մեջ տեսնելու անհատին,
- ունենա հաղորդակցման հմտություն,
- ցուցաբերի համագործակցային մոտեցում,
- ունենա ղեկավարման հմտություններ,
- տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանք օգտագործի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1.բոլորն ունեն մասնագիտական համապատասխան որակավորում: 2.հաճախակի են կազմակերպում միջոցառումներ և բաց դասեր իրականացնում, 3.աշխատակազմը փորձում է իրականացնել աշակերտակենտրոն ուսուցում,	1. խուսափում են ՏՀՏ կիրառել, ժամանակակից մեթոդներ կիրառել, 2.ուսուցիչները դեռևս լավ չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին և մի շարք փոփոխություններին, 3.խուսափում են կամավոր ատեստավորումից, չեն մասնակցում մրցույթների:

ՆՊԱՏԱԿ

↓

Աշխատակազմի որակական բարելավում

↓

խնդիրներ

↓

ուսուցիչների ինքնակրթությանը ուղղված աշխատանքների կազմակերպում

↓

գործողություններ

↓

1.ինֆորմատիկայի ուսուցչի միջոցով շարունակաբար կազմակերպել դասընթացներ՝ ուսուցիչների համակարգչային գրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով:

2.աջակցել և խրախուսել տարբեր մրցույթներին մասնակցելու համար,

3.մեթոդմիավորումների հետ ունենալ ինքնազարգացմանը նպաստող հստակ պլան,

4. ստեղծել անհատական էլեկտրոնային գրապահոց, որը համալրված կլինի բազմապիսի մեթոդական ձեռնարկներով և նյութերով,

5. հնարավորություն տալ մեթոդմիավորման անդամներին ներկա գտնվելու ուսուցիչների բաց դասերին,

6. հորդորել և աջակցել համացանցում տարբեր հարթակներում ներկայանալ մեթոդական աշխատանքներով:

7.ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

Կրթական համակարգի գլխավոր և կարևոր մասն են սովորողները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. բոլորն ապահովված են դասագրքերով, 2. բոլորն էլ շատ են ցանկանում հաճախել նաև խմբակների, 3. 4 ԿԱՊԿՈՒ սովորողներն ունեն աջակցող թիմ և սիրով են հաճախում	1.կա ընթերցանության պակաս, չկա հետաքրքրություն գրքի նկատմամբ, 2.էլեկտրոնային գրքերն ու դասագրքերն ավելի գերադասելի են նրանց համար, 3. ծնողների ծանրաբեռնվածության

դպրոց, 4.սովորողները սիրով են մասնակցում միջոցառումներին,	պատճառով որոշ երեխաներ դուրս են մնում նրանց վերահսկողությունից, ինչը նաև անդրադառնում է ուսման որակի վրա, 4.շատերը ձգտում են սովորել գնահատականի համար

ՆՊԱՏԱԿ

↓

կրթական բովանդակության վերանայում

↓

խնդիրներ

↓

1.սովորողների կրթական իրավունքի իրացում ՀՊՉ-ին համահունչ,

2.մոտիվացիայի բարձրացում,

3. գիտելիքները վերածել կարողությունների և հմտությունների,

4. ժամանակակից ծրագրերի իրականացում.

↓

գործողություններ

↓

1. աշակերտներին սովորեցնել գիտելիքները կիրառել առօրյա կյանքում,

2. սովորեցնել քննադատաբար, ինքուրույն մտածել,

3. զարգացնել սովորել սովորելու կառողունակությունը,

4.սովորողների մեջ ձևավորել արժեքային համակարգ տարբեր միջոցառումների միջոցով,

5.սովորողներին տալ ստեղծագործելու, ինչ-որ բան ստեղծելու ւ գործնականում գիտելիքները կիրառելու հնարավորություն,

6.սովորողներին մասնակից դարձնել դպրոցական կյանքին տարբեր զրույցների, աշխատանքների, միջոցառումների միջոցով,

7. ընթերցասրահին հատկացնել տարածք, կահավորել, ավելացնել սեղանների և աթոռների թիվը, իրականացնել միջոցառումներ և դարձնել ցանկալի վայր:

8. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի և մեր առջև դրված նպատակին՝ կարևոր և առանցքային է ներդպրոցական վերահսկողության ապահովումը, որը պետք է ունենա շարունակական բնույթ և մշտապես պետք է լինի տնօրենի ուշադրության կենտրոնում:

5 տարիների ընթացքում պետք է պահպանվեն ուժեղ կողմերը և վերանայվեն թույլ կողմերը:

Այս պահի դրությամբ բոլոր ուսուցիչներն ունեն առարկայական թեմատիկ պլաններ, դասի են ներկայանում ժամանակին, օրվա պլանով, իրականացնում են փոխադարձ դասալսումներ: Մեթոդմիավորումները հրավիրում են նիստեր, իրականացնում են քննարկումներ, ունեն աշխատանքային պլաններ կիսամյակի ավարտին ներկայացնում են հաշվետվություն ըստ կարգի: Մանկավարժական խորհրդի նիստերի ընթացքում քննարկվում են կարգապահական կանոնները, աշխատակազմի, սովորողների և մնացյալի վարքագծի կանոնները: Չունենք պարբերաբար բացակայող աշակերտներ: Մաթեմատիկա և բնագիտական առարկաներից սովորողներն ավելի պասիվ են:

ՆՊԱՏԱԿ

↓

Տիրապետել դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական ինֆորմացիային

↓

1.իրականացնել մշտական վերահսկողություն,

ա) ուսուցիչների աշխատանքի ոլորտում,

բ)սովորողների կողմից գիտելիքների յուրացման ոլորտում,

գ)բոլոր պլանների կատարման ոլորտում

↓

գործողություններ

↓

1. մշտապես վերահսկել հաճախումների մատյանում կատարվող աշխատանքները,

2. վերահսկել բոլոր տեսակի պլանների պատշաճ կատարումը,

3.վերահսկել առարկայական մասնախմբերի աշխատանքները,

4.իմանալ և յուրացնել ուսուցիչների մասնագիտական պարտականությունները ներկայացնող փաստաթղթերը,

5. իրականացնել ստուգարքներ և պարզել առանձին առարկաներից ձեռք բերած գիտելիքների քանակն ու որակը,

6. վերահսկողության արդյունքում գրանցած արդյունքները վերանայել և իրականացնել համապատասխան միջոցառումներ և քայլեր բացը լրացնելու ուղղությամբ

9.ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԱՆՁՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի տնօրենը պետք է օրինակ լինի բոլորի համար, նա պետք է իր մեջ կրի որոշակի արժեհամակարգ, լինի բազմակողմանի զարգացած, հիանալի տիրապետի մայրենի լեզվին, գործի բարեկիրթ, հետևի կանոնադրությանը , լինի անաչառ, օբյեկտիվ և արդարամիտ, մարդկային վեհ արժեքներով օժտված, ունենա պատասխանատվության բարձր զգացում, հարգանք դրսևորի բոլորի նկատմամբ, մշտապես համագործակցի բոլորի հետ, կարողանա վերլուծել իրավիճակն ու գտնել համապատասխան լուծումներ՝ ի նպաստ դպրոցի, երեխաների, կրթական համակարգի և հայրենիքի։

Կադրային քաղաքականություն

Տնօրենը մշտապես պետք է հետևողական քայլեր ձեռնարկի անձնակազմի կառավարման գործընթացները առավել բարելավելու ուղղությամբ։

Ուստի պետք է՝

1. Անձնակազմի գործունեության խրախուսում /պաշտոնական աճ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, կամավոր ատեստավորում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝ «Դպրոցի լավագույն ուսուցիչ», «Դպրոցի լավագույն դասղեկ» և այլ անվանակարգերի սահմանում/։

2. Ոլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման և վերապատրաստան միջոցառումների իրականացում։

3. Խրախուսի և աջակցի մանկավարժական անձնակազմի պարբերաբար վերապատրաստում

4. իրականացնի կադրերի համալրում՝ ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից։

5. Սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում։

6. Մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում՝ տարեկան կտրվածքով։

Վերը նշված բոլոր կետերը լրացնում են միմյանց և փոխկապակցված են իրար, ուստի՝ հետևելով և վերահսկելով բոլոր կետերը, մենք կզարգացնենք սիրելի

կրթօջախը և վաղն այն կդառնա ավելի լավն ու բարեկեցիկ:

10. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

1. ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ.

Երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությունն ապահովելը դպրոցի պարտականությունն է: Դպրոցը պետք է մանկավարժական գործունեությունը համատեղի երեխայի հանդեպ հոգատարության հետ. ցույց տա նրան մանկավարժական, հոգեբանական, ֆիզիկական և մշակութային օգնություն: Հասկանալի է, որ ուսուցիչներն այստեղ կարևոր դերակատարում ունեն: Առանձնակի կարևորություն է ստանում ֆիզկուլտուրայի ժամերի արդյունավետ օգտագործումը: Ոչ միայն կոփել երեխաների մարմինը, այլ նաև սերմանել այն գիտակցությունը, որ առողջ մարմնում միայն կարող է լինել առողջ հոգի: Առողջ ապրելակերպի պահանջն այսօր առավել քան արդիական է: Այսօր մարդն ակամա շնչում է ամենուր ապականված օդը, ընդունում է տարատեսակ մոդիֆիկացված սնունդ, որի վնասակար ազդեցությունը դեռևս բացահայտված չէ, աշխատում է բարդ և օրեցօր ավելի բարդացող տեխնիկական սարքերի հետ, ժամեր շարունակ անշարժ նստում է համակարգչի առաջ, համացանցի ազդեցությամբ տարբեր գայթակղությունների է տրվում՝ ծխախոտ, ալկոհոլ, թմրամիջոցներ օգտագործելու սովորությունների ձևավորում և այլն: Սովորողների առողջությունը վատթարանում է, ամեն ինչից զատ, նաև ուսուցման գործընթացում: Հայտնի են զուտ դպրոցական համարվող մի շարք հիվանդություններ, ինչպիսիք են ողնաշարի ծռվածքը, կարճատեսությունը, նյարդային համակարգի տարազան խանգարումները և այլն: Ուսուցիչների խնդիրն է սովորողների մեջ ձևավորել առողջ ապրելակերպ ենթադրող սովորություններ, ծանոթացնել նրանց առողջության պահպանման միջոցներին ու հնարներին և, հնարավորության սահմաններում, ապահովել ֆիզիկական ակտիվության բարձր մակարդակ: **Աջակցել ուսուցիչներին**

իրականացնելու տարբեր միջոցառումներ, այդ թվում ֆիզկուլտուրայի և ՆԶՊ առարկաների ուսուցիչների հետ համագործակցելով՝ իրականացնել ռազմամարզական միջոցառումներ:

Իրականացնել տարբեր միջոցառումներ և խթանել առողջ ապրելակերպի պահպանումը դպրոցում: Ապահովել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջը՝ պարտադիր պրոֆիլակտիկ զննության անցկացման մասին:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մեր հանրակրթության մեջ գնահատման նոր համակարգի ներդրումը ենթադրում է «գնահատում» հասկացության իմաստի ընդլայնում: Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին:

Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իր այս գործառույթից զատ այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ: Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնաիրացմանը:

Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ: Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա, թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:

Սովորողը ձգտում է ինքնաիրացման: Նա բնականաբար ձգտում է ընտրել ուսումնական գործունեության այն ոլորտը, որն իրեն առավելապես հետաքրքիր է և իր ընդունակություններն օգտագործելով կարող է լավագույնս բավարարել իր մտավոր, հոգևոր կամ ֆիզիկական պահանջմունքները: Սակայն առաջին իրողությունը, որին բախվում է ինքն իրեն, իր ներունակ հնարավորությունները գիտակցել սկսող երեխան, ուսուցիչների անհեթեթ պահանջն է. լավ սովորել իրենց

առարկան: Բայց ակնհայտ է, որ մարդն ի վիճակի չէ բոլոր առարկաները լավ սովորելու: Ավանդաբար ձևավորված դպրոցական մթնոլորտն այնպիսին է, որ չափորոշչային նվազագույն պահանջներին բավարարող աշակերտը չի ազատվում ուսուցչի սպառնալիքներից, հեգնանքից կամ ավելի լավ սովորելու հորդորից: Ուսուցիչներն հաճախ չեն գիտակցում ու ընդունում այն տարրական փաստը, որ երբ աշակերտը սովորում է հարկադրված, բռնանալով իր հետաքրքրությունների ու հակումների վրա, սովորում է հանուն ուսուցչի, հանուն լավ սովորողի իր համբավի պահպանման՝ ստացած գիտելիքները նրան ոչինչ չեն տալիս: Պարտադրաբար յուրացված գիտելիքը չի ներքնայնացվում, չի իմաստավորվում ու մնում է մարդու հիշողության մեջ որպես անպետք տեղեկույթ:

Ուսուցիչը կարծես թե չի ուզում իր առարկան չսովորող աշակերտի մեջ լավ բան տեսնել: Գնահատականին ավելի լայն իմաստ հաղորդելով և սովորողների գիտակցության մեջ մտցնելով այդ հոռի մտայնությունը, թե ցածր գնահատականը մարդու ոչ թե տվյալ առարկայի հանդեպ հետաքրքրություն չդրսևորելու արտահայտությունը կամ փաստի արձանագրումն է, այլ նրա տգետ, վատ, ծույլ լինելու վկայությունը, ուսուցիչները պարտադրում են սովորողին իր ինտելեկտուալ ուժերն սպառել, ցրելով դրանք բոլոր առարկաների վրա: Իր հերթին գնահատականն այլևս չի ծառայում ուսումնական նպատակներին. շահարկելով ՝օբյեկտիվության՝ պահանջը ուսուցիչները զլանում են թվանշանը սովորողի ոգևորության միջոց դարձնել:

Առաջադիմության միավորային գնահատման պայմաններում, երբ ուշադրության է արժանանում գլխավորապես սովորողի փաստական առաջադիմությունը, աշակերտի մեջ չեն ձևավորվում ինքնագնահատման պահանջ ու կարողություններ: Միջոցներ չունենալով սեփական անձը գնահատելու՝ նրա ինքնագնահատականը կախյալ է դառնում շրջապատի կարծիքից: Արդյունքում դժվարանում է այնպիսի կարևոր անձնային որակների ձևավորումը, ինչպիսին ինքնուրույնությունն ու անկախ մտածելակերպն է: Բացի այդ, ընդունակությունների մի ստվար բաժին՝ մտածողության յուրակերպությունը, ուսումնառության մոտիվները, ուսումնական գործունեության առանձնահատկությունները մնում են չբացահայտված:

Գնահատման համակարգի զարգացման ժամանակակից փուլում նկատելի է ուսուցչի գնահատումից սովորողի մասնակցությամբ գնահատմանն անցման միտումը, ինչպես նաև՝ գնահատման անորոշ և աշակերտից թաքուն պահվող չափանիշներից անցում գնահատման բացահայտ չափանիշների: Այս պրոցեսները նպատակ ունեն ուսումնական գործունեությանն ուղեկցող մրցակցային վնասաբեր հարաբերությունները փոխարինել համագործակցային հարաբերություններով: Գաղտնիք չէ նաև, որ առկա համակարգում առավելապես գնահատվում են սովորողների գիտելիքներն ու հիշողությունը: Մինչ համաշխարհային կրթական զարգացումները մատնանշում են այլ ճանապարհ. գնահատել ավելի համալիր որակներ՝ առարկայական ու վերառարկայական

մտահասություններ, իսկ հիշողության փոխարեն արժևորել հասկացման, երևույթների մեկնաբանման, վերլուծման ու համադրման կարողությունները:

Հիշյալ հիմնախնդիրների և կրթության զարգացման ընդհանուր միտումների լույսի տակ առանձին կարևորություն է ստանում այսպես կոչված ուսուցանող կամ ձևավորող գնահատումը (formative assaesment):

Ուսուցանող գնահատումն իր բնույթով ընթացիկ գնահատում է: Նրա նպատակը ոչ թե սովորողի փաստական գիտելիքներն ստուգելն ու գնահատելն է, այլ ուսուցման գործընթացը մշտապես ուշադրության կենտրոնում պահելը. պարբերաբար բացահայտել սովորողների դժվարություններն ու ուսումնական չօգտագործված հնարավորությունները և համապատասխան բարեփոխումներով հասնել հնարավոր լավագույն արդյունքին: Այլ խոսքով՝ ուսուցանող գնահատումը ուսուցման ու դաստիարակության արդյունքների որակի և սովորողների զարգացման դինամիկայի մասին տեղեկությունների հավաքում ու մշակում է և վերջինիս հիմքի վրա ուսուցման գործընթացի շարունակական բարելավում: Գնահատման իմաստի այսօրինակ ըմբռնումը, ցավոք լայն կիրառություն չի գտել մեր հանրակրթական դպրոցներում: Ուսուցիչը պետք է հոգեբանորեն հարմարվի այն գաղափարին, որ աշակերտն ազատ է սովորելու այն առարկաները, որոնց հանդեպ հետաքրքրություն ու հակում ունի: Խոսքն, իհարկե, չափորոշիչով սահմանված նվազագույն գիտելիքներին ու կարողություններին չի վերաբերվում. դրանք ենթակա են պարտադիր յուրացման: Ուսուցչի գնահատականը պիտի գերազանցապես ծառայի սովորողի խրախուսանքին ու ոգևորությանը և նվազագույն չափով նրանց համեմատությանը: Տնօրենի աշխատանքն այս հարցում միանգամայն հստակ է. նա պետք է ուսուցիչներին հորդորի գնահատման գործընթացին նայել այլ տեսանկյունից և ամեն ինչ անել, որպեսզի այն լինի ի նպաստ սովորողի:

3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՅԱԼ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցման մեթոդները նպատակ ունեն ապահովել կրթության բովանդակության որակյալ յուրացումը: Կրթության բովանդակությունը գիտելիքների, կարողությունների և արժեքների միասնությունն է:

Կարողությունը գիտելիքների և ընդունակությունների կիրառումն է պրակտիկայում: Դա գործունեության մի տարր է, որն ապահովում է ինչ-որ բանի ճիշտ և որակյալ կատարումը:

Կարողության լրիվ ավտոմատացված, անգիտակցական վերահսկողության մակարդակով կատարվող բաղադրիչները կոչվում են **հմտություններ**: Հմտությունները ձևավորվում են վարժությունների միջոցով: Հմտությունների

առկայության դեպքում մարդու գործողությունների կատարման արագությունը կտրուկ մեծանում է:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ուսուցման մեթոդն իր գործառության մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն : Այլ խոսքով

Ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխպայմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝ ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:

Մանկավարժները միահամուռ այն կարծիքին են, որ մեթոդն է ուսուցման նպատակներն իրականացնողը և «ինչպե՞ս սովորեցնել» հարցին միայն վերջինս է պատասխանում: Ենթադրվում է, որ ուսուցման կազմակերպական ձևը երկրորդական նշանակության կառուցվածք է և կրթության որակի ապահովման խնդրում նկատելի դեր չունի: Ուսուցման մեթոդը մատնանշում է ուսուցման ներքին, պրոցեսուալ կողմը և հանդես է գալիս մի կողմից որպես ուսուցչի ուսուցանող աշխատանքի, մյուս կողմից՝ ուսումնական նյութի յուրացմանն ուղղված սովորողների ուսումնական (իմացական) գործունեության եղանակ: Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևի հասկացությունը այլ իմաստ ունի: Լատինական forma բառը նշանակում է արտաքին տեսք, արտաքին ուրվագիծ: Հետևաբար, ուսուցման ձևը որպես դիդակտիկական կատեգորիա, մատնանշում է ուսումնական աշխատանքի կազմակերպման արտաքին կողմը, որը կապված է սովորողների քանակի, ուսուցման ժամանակի ու տեղի, ինչպես նաև նրա իրականացման կարգի հետ :

Եվ այսպես, դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ

որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: **Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը: Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը, հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները: Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա:** Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառույթ ունի. ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:

Դպրոցի տնօրենը պետք է խրախուսի, աջակցի, որպեսզի ուսուցիչները չվախենան տարբեր մեթոդներ կիրառելուց, փորձելուց, կատարելագործվելուց, ուստի տնօրենը պետք է ջանա գրադարանը հարստացնել մեթոդական նոր ձեռնարկներով, համագործակցել գրադարանավարի հետ և գտնել նաև էլեկտրոնային տարբերակներ, դրանք տարածել ուսուցիչների շրջանակում և իրազեկել նրանց, խրախուսել դասերն իրականացնել նոր, ժամանակակից և ինտերակտիվ մեթոդներով: Միաժամանակ վերահսկել նրանց աշխատանքը և կազմակերպել փորձի փոխանակում:

4. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Դաստիարակչական համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ է՝

1. Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում:

2. Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը:

3.Մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտել առկա խնդիրներն ու բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

4. Անհրաժեշտ է համագործակցել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմինների հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ:

5. Ընդլայնել դասարանների առանձին սովորողների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների պատկանող սովորողների ներդպրոցական և արտադպրոցական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները:

6. Բոլոր աշխատանքները պետք է նպատակաուղղված լինեն սովորողի մոտ արժեհամակարգի ձևավորմանը, որի արդյունքում նա կլինի ազգային արժեքների կրողը, պահպանողը և փոխանցողը:

5. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս նպատակահարմար ենք գտնում նախ անդրադառնալ դաստիարակությանը և կարևորելով բարոյական, հայրենասիրական, աշխատանքային դաստիարակությունը կարող ենք տալ հստակ սահմանում. արդյոք ո՞րն է սովորողների մեջ ազգային արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հաշվի առնելով դաստիարակության առանձնահատկությունները, իսկ դրանք ենք.

-օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հանդես գալը,

- միանգամից չերևացող կողմը,

- երկարատևությունը,

-կոմպլեքսային բնույթը,

-երկկողմանի բնույթը,

-ամբողջական բնույթը,

կարող ենք նշել, որ սովորողների մեջ ազգային արժեքային համակարգի ձևավորման ընթացքում դրսևորվորվում է դաստիարակությունն իր բոլոր առանձնահատկություններով :

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ: Ուստի դպրոցի տնօրենը պետք է վերանայի բոլոր այն միջոցառումների խորագրերը, որոնք ուսուցիչները պատրաստվում են իրականացնել տարվա ընթացքում և հորդորի, որպեսզի խորագրերն ընտրելիս նրանք հասվի առնեն, թե արդյոք ինչ արժեքային համակարգ են պատրաստվում ձևավորել սովորողների մեջ, հստակ կարողանան սահմանել այն նպատակը, որին ցանկանում են հասնել: Միջոցառումները ոչ թե պետք է իրականացնել պարզապես, ուղղակի իրականացնելու համար, այլ պետք է ունենան գաղափար, նպատակ, քայլարշավ և վերջնարդյունք, ուստի տնօրենը պետք է նախ ծանոթանա միջոցառումների սցենարներին, պահանջին հստակ ձև, որտեղ նշված կլինի նպատակն ու խնդիրները, վեր հանի և կարևորի արժեհամակարգը և հետո միայն թույլատրի իրականացնել միջոցառումը:

Սահմանենք միջոցառումների նպատակները՝

1. Պահպանելու և տարածելու ՀՀ պետական խորհրդանիշների բովանդակությունն ու նշանակությունը։
2. Ձևավորելու ռազմահայրենասիրական դաստիարակություն՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի և կրոնների նկատմամբ։
3. Հայրենասիրական դաստիարակություն իրականացնել դպրոցում՝ ուսուցանելով ազգային երգ ու պար, ազգային խոհանոց, արհեստ և արվեստներ։
4. Դպրոցը դարձնել պետության փոքր մոդել, որտեղ յուրաքանչյուր սովորող կիմանա իր մասնակցության կարևորության և դրա իրական հնարավորությունների մասին, կզարգանա ու կձևավորվի վերջինիս մոտ պետական մտածելակերպ։
5.Հայրենասիրական դաստիարակությունը նաև սովորողների մոտ կկրճատի տարբեր օրինախախտումների և նրանց մոտ առկա վնասակար սովորությունների մակարդակը։

6. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁԻ ՄՈԴԵԼԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցչի անձի մոդելը կարևորագույն խնդիրներից է դպրոցում:

Մեր կարծիքով դրան հատկանշական են՝

• կրթվածությունը՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքներ, առաջադիմական հայացքներ, բարձր բարոյականություն, գեղագիտական ճաշակի և հոգևոր մշակույթի զարգացվածություն, ստեղծագործական ինքնազարգացում,

• հոգևոր զարգացած ներաշխարհը՝ բարոյական բարձր հատկանիշները, սերը դեպի երեխաները, մասնագիտական կոչման և կյանքի նպատակների գիտակցումը, միջանձնային հարաբերությունների ներդաշնակությունը, դիմացինի հոգին թափանցելու, անդրադարձ կատարելու ունակությունը,

• ստեղծագործական հատկանիշները՝ նորի և ինքնատիպի որոնումը, ստեղծագործական գործունեության դրդապատճառների առկայությունը, իր և սաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը, կյանքում,

մասնագիտական գործունեության մեջ և մշակույթի աշխարհում ազատության զգացումը և ինքնորոշման ունակությունը,

• ազատությունը՝ անձնական և մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակը, հոգևոր և նյութական արժեքների աշխարհում կողմնորոշվածությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, կենսական դիրքորոշումը,

• մարդասիրությունը՝ գթասրտությունը, այլոց օգնելու ունակությունը, համբերատարությունը, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու կարողությունը, աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների հետ համագործակցելու ձգտումը,

• քաղաքացիական ակտիվությունը՝ շրջապատում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների գնահատումներում դատողությունների և վերլուծությունների օբյեկտիվությունը, հայրենասիրությունը, պարտքի և պատասխանատվության զգացումը, լավատեսությունը, իր և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը,

• մրցունակությունը՝ ժամանակի ոգուն և մասնագիտական պահանջներին համապատասխանությունը, մանկավարժական առաջադիմական փորձի ուսումնասիրումը, այդ փորձի ստեղծագործաբար կիրառումը և զարգացումը, հետազոտական աշխատանք կատարելու ունակությունը, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը, աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ձգտումը,

• հաղորդակցումը մշակույթին՝ սոցիալ–մշակութային իրավիճակների վերաբերյալ գիտելիքներ, ժողովրդական ծեսերի, սովորույթների և ավանդույթների իմացություն, արվեստի տեսակների վերաբերյալ գիտելիքներ և խոր հետաքրքրություն, սովորողների մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում1 : 21–րդ դարի ուսուցչի՝ Վ. Ի. Անդրեևի կողմից առաջարկվող մոդելի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական բարձր մշակույթի, լինի արժեհամակարգի կրող: Մանկավարժը, որը տիրապետում է մանկավարժական մշակույթի բարձր մակարդակի, ունի սեփական ոճը, մանկավարժական անհատական ձեռագիրը, ձգտում է կերտել մանկավարժի օրինակելի կերպար:

Մանկավարժական մշակույթը համամարդկային մշակույթի մի մասն է, որը միավորում է մանկավարժական պատմամշակութային փորձը և կարգավորում է մանկավարժական փոխներգործության ոլորտը: Մենք լիովին համաձայն ենք այն դիտարկմանը, որ մանկավարժական մշակույթի մակարդակը փոխադարձաբար կապված է կրթադաստիարակչական գործընթացի մակարդակի հետ: Բայց և այնպես, մեր կարծիքով, այդ անընդհատ գործընթացի մեջ է ամփոփված մշակույթի էությունը. մարդը (տվյալ դեպքում՝ ուսուցիչը) կախված է հասարակության ընդհանուր

մշակույթի զարգացումից, բայց և հասարակության մշակույթի զարգացումը կախված է նրա յուրաքանչյուր անդամի անհատական մշակույթից:

Ուսուցչի անձի մանկավարժական ուղղվածությունից (անձնային որակներ, մեթոդամասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, հոգեբանամանկավարժական խորագիտություն, վարք, հաղորդակցում և այլն) են կախված մանկավարժական գործունեության իրականացման բնույթն ու արդյունավետությունը: Այդ գործոններն են պայմանավորում ուսուցչի ինքնակատարելագործումը, որը նրա հետագա գործունեության մեջ արտահայտում է վարքային դրսևորումներ մշակույթում, մանկավարժական մտածողության մեջ, որն էլ հանգեցնում է ուսուցչի կողմից մանկավարժական մշակույթի հստակ ըմբռնմանը և յուրացմանը: Ապագա ուսուցիչների մանկավարժական–մասնագիտական մշակույթին , արժեքային համակրգին նվիրված հետազոտություններում (Օ. Ա. Շկիլյովա, Ա. Է. Կորոբովա, Մ. Վ. Նիկոլաևա և այլք) մանկավարժական մշակույթը դիտարկվում է որպես մանկավարժի մասնագիտության կարևոր հատկանիշ, ուսուցչի կողմից մարդկության մանկավարժական փորձի տիրապետման որոշակի աստիճան, մանկավարժական արժեքների անընդհատ զարգացող համակարգ, ուսուցչի գործունեության միջոց և վարքի արտահայտություն:

7. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ

Ազատ ու անփույթ,

Աշխարհքն ինձ համար կըլոր էր անվերջ,

Կեղևը՝ կապույտ:

...Հիմի թրռչում եմ հեռու, շատ հեռու,

Ամեն տեղ գրնում

Բայց թե աշխարհքն ինչի՞ց է շինված.

Էլ չեմ հասնանում

Հովհ . Թումանյան

Բարոյապես անբասիր անձնավորության ձևավորումը որքան կարևոր, նույնքան և դժվարին խնդիր է։ Որքան էլ մեծ է ուսուցչի հսկա աշխատանքը, այնուամենայնիվ այստեղ բախտորոշ դեր է կատարում ընտանիքը։

Երբեք չի հնանում կենսական այն ճշմարտությունը, ըստ որի , ոչ մի խելոք խոսք ու խրատ այնքան արձագանք չեն գտնում մանկան արթուն հոգում, որքան ծնողների և մերձավորների իրական կյանքն ու բարքը։

Կյանքի կենդանի տպավորություններն անհամեմատ զորեղ են ու ներգործուն։ Երեխայի զգայուն հոգին որսում է մարդկային հարաբերությունների այնպիսի նրբերանգներ, որ շատ անգամ կարող են վրիպել չափահասների ուշադրությունից։ Ուրեմն իր զավակների դաստիարակության մասին հոգացող ծնողը նախ պետք է շիտակ պատասխան տա այն հարցին, թե ինչպիսին է ի՛ր կյանքը։

Մարդկության դարավոր կենսափորձը սերնդեսերունդ կուտակվելով, ամրապնդվում է, դառնում օրենք, ավանդույթ, բարոյականության չափանիշ, համակեցության կանոն և, ժամանակի ընթացքում ենթարկվելով հասարակական տեղաշարժերով թելադրված փոփոխությունների, որոշակի հունի մեջ է դնում անձի վարքագիծը, նաև հեշտացնում աճող սերնդի դաստիարակությունը։ Պատահական չէ, որ օրինապահ, ավանդապահ, տվյալ երկրի ու ժողովրդի բարոյական չափանիշներին ներդաշնակ ապրող չափահասների միջավայրում երեխաների դաստիարակությունը ընթանում է անհամեմատ հարթ։ Զավակները փոքր ու մեծ են ճանաչում, գիտակցում են իրենց պարտականությունները և չեն զլանում դրանք կատարել, անհամեմատ բարեկիրթ են։ Նրանց հոգում մանկուց ծլարձակում և արմատ է գցում այն համոզմունքը, որ բարոյական մարդու խոսքի ու վարքի միջև հակասություն չկա։

Մինչդեռ ինչքան քիչ բան է խոստանում և ինչ վտանգներով է հղի դաստիարակությունն այն երեխայի, ում ծնողները խոսում են ազնվությունից, բայց չեն խորշում կեղծելուց, խոսում են մարդկային բարձր որակներից և շատ անգամ անտեսում դրանք, խոսում են բարությունից, բայց կարող են այս կամ այն կոնկրետ իրադրությունում ունենալ անսիրտ ու անողոք վարվեցողություն։ Ուստի դպրոցն այստեղ անելիք ունի. նախ տնօրենը պետք է ունենա ուսուցիչների՝ դասղեկների, միջոցով կազմված այն ցուցակը, որտեղ նշվում է՝

1.պատերազմներում զոհված ծնողներ ունեցող երեխաների թիվը,

2.նյութապես անապահով սովորողների թիվը,

3.երկկողմանի ծնողազուրկ սովորողների թիվը,

4.միակողմանի ծնողազուրկ սովորողների թիվը,

5.հաշմանդամ ծնողներ ունեցող սովորողների թիվը,

6.ծնողների խնամքից զրկված սովորողների թիվը,

7.միայնակ մոր խնամքի տակ մնացած սովորողների թիվը,

8. սովորողների թիվը, որոնց ծնողները դատապարտված են,

9.սովորողների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում,

10. այն սովորողների թիվը, որոնք իրականացնում են վարձու աշխատանք՝ ընտանիքին օգնելու նպատակով:

Անհրաժեշտ է՝

1. Դասղեկների, ինչպես նաև սոցմանկավարժների պարբերաբար տունայցերի միջոցով ծանոթանալ և տեղեկություններ հավաքել ընտանիքի փաստացի վիճակի մասին

2.Կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական մեխանիզմները համապատասխան մասնագետների կողմից /հոգեբան, ուսուցիչ/՝ տրամադրելով խորհրդատվություն

3.Ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

11. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ , ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Շրջակա միջավայր.

N	*Խնդիրներ*	*Գործողություններ և միջոցառումներ*	*Ժամանակացույց*	*Պատասխանատուներ*
1	*Տարածքի կանաչապատում*	*Պտղատու ծառերի տնկում՝ որպես ուսումնական միջավայրի բարենպաստ պայմանների ստեղծման մաս*	*2024-2025 թթ*	*Դպրոցի աշխատակազմ, ծնողական համայնք, սովորողներ*

2	Տարածքի բարեկարգում և մարզադաշտի համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Համադպրոցական ջանքերով մարզադաշտի վազքուղիների բարեկարգում, ծնողխորհրդի աջակցությամբ մարմնամարզության համար անհրաժեշտ պարագաների տեղադրում, որոնք հնարավոր է պատրաստել գյուղի պայմաններում. Օրինակ՝ ֆուտբոլի դարպասներ, բասկետբոլի գնդակի նետման զամբյուղ, ցատկելու համար տեղանքի հարմարեցում և այլն:	2024-2026թթ	Դպրոցի աշխատակազմ, ծնողական համայնք, սովորողներ
3	Երկրորդ հանդերձարանի հատկացում	Առկա հանդերձարանի բարեկարգում, պայմաններ ստեղծել տղա և աղջիկ սովորողների հանդերձափոխման համար՝ կախիչների ավելացում, հատակի նորոգում,երկրորդ հանդեձարանի հատկացում	2023-2027թթ	Տնօրեն, համակարգող, կառավարման խորհուրդ, ծնողխորհուրդ, կամավորներ
4	Ջեռուցման ապահովում հանդիսություններ ի դահլիճում	Լոկալ ջեռուցման ստեղծում կամ ջեռուցման այլ միջոցի ձեռքբերում(տաքացուցիչ) ցուրտ եղանակներին միջոցառումների ընթացքը չխաթարելու համար	2023-2028թթ	Տնօրեն, համակարգող.

Ուսումնատեխնիկական բազա

N	Խնդիրներ	Գործողություններ և միջոցառումներ	Ժամանակացույց	Պատասխանատուներ
1	Ստեղծել լաբորատորիա,մասնագիտական դասասենյակներ, համալրել անհրաժեշտ նյութերով	Դիմել խորհրդակցական մարմիններին և քննարկել հարցի լուծման ուղիներ. ձեռք բերել փորձարկվող այնպիսի նյութեր, որոնք կարող ենք գտնել կենցաղում, հնարավորության դեպքում նաև քիմիական ավելի բարդ նյութեր	2023-2028թթ.	Տնօրեն, համակարգող, խորհրդակցական մարմիններ
2	Համալրել համակարգիչների քանակը, ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ և պրոյեկտորներ,	Համակարգիչների և էլեկտրոնային գրատախտակի միջոցով ՏՀՏ դասընթացները դարձնել հաճախակի և բազմազան	2023-2028թթ.	Տնօրեն, համակարգող
3	Ապահովել համացանցի հասանելիությունը դպրոցի տարբեր մասերում	Ավելացնել համացանցի ցրիչների քանակը՝ դասապրոցեսները հագեցած անցկացնելու համար	2023-2026թթ.	Տնօրեն, համակարգող
4	Գրադարանում տեղադրել համակարգիչ և համալրել ուղեցույցներով, մեթոդական նյութերով,	Գրքերի վարումը դարձնել առցանց,	2023-2028թթ.	Տնօրեն, համակարգող, գրադարանավար

	պաստառներով	գրադարանում կազմակերպել տարատեսակ միջոցառումներ		

Համագործակցություն

N	Խնդիրներ	Գործողություններ և միջոցառումներ	Ժամանակացույց	Պատասխանատուներ
1	Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի դերի բարձրացում	Ակտիվացնել համագործակցությունը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև	2023-2025	Տնօրեն, համակարգող, կառավարման խորհուրդ, լիազոր մարմին
2	Ապահովել կառավարման խորհրդի ակտիվ ներգրավվածությունը ուսումնադաստիար ակչական աշխատանքների մեջ՝ լիազորությունների շրջանակում	Կառավարման խորհրդի նիստերի ընթացքում քննարկել ներքին և արտաքին գնահատման արդյունքները, տարբեր ուսումնադաստիար ակչական հարցեր, ինչպես օրինակ հրաձգարանի ստեղծում՝ ռազմագիտության դասի արդյունավետությունը ապահովելու համար;	2023-2028	Կառավարման խորհուրդ, տնօրեն, լիազոր մարմին
3	Ապահովել համայնք-դպրոց կապը	Կազմակերպել սեմինար-քննարկումներ համայնքային հարցերի շուրջ, սովորողների նախագծային թեմաների մեջ ներառել համայնքային խնդիրներ	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, համայնք, ուսուցիչներ

4	Համագործակցության ապահովում կրթության կառավարման մարմինների հետ,	Մասնակցել բոլոր միջոցառումներին	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ,անձնակազմ

ԱՇԽԱՏԱԿԱՋՄ

N	Խնդիրներ	Գործողություններ և միջոցառումներ	Ժամանակացույց	Պատասխանատուներ
1	Ստեղծել նպաստավոր պայմաններ ուսուցիչների կրթական որակի բարձրացման համար	Կազմակերպել ուսուցչական հանդիպումներ, վեբինարներ, ֆորումներ և դրանով խթանել ուսուցիչներին՝ տարակարգ և կամավոր ատեստավորում ստանալու համար	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, մեթոդմիավորման նախագահներ
2	Մանկավարժական համակազմի բոլոր անդամների համակարգչային հմտությունների տիրապետում	Երիտասարդ և գիտակ աշխատակիցների օգնությամբ և դասընթացների շնորհիվ հասնել նրան, որ բոլոր մանկավարժները կարողանան օգտվել ՏՀՏ տարբեր միջոցներից	2023-2025	Մեթոդմիավորումներ
3	Առարկայական բաց դասերի հաճախակի կազմակերպում	Հայտարարել առարկայական շաբաթներ և ըստ այդմ կազմակերպել բաց դասեր՝ բոլոր առարկաներից	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, մեթոդմիավորումներ
4	Միջդպրոցական համագործակցություն	Սեմինարների կազմակերպում, փորձի փոխանակում, ինտելեկտուալ խաղ-միցույթների, վիկտորինաների , սպորտլանդիաների կազմակերպում	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, մեթոդմիավորումներ, դասղեկներ

5	Ներդպրոցական համագործակցություն	Առաջնորդվելով կառավարության, ԿԳՄՄՆ ,բոլոր հրահանգներով, իրավական ակտերով նաև հաշվի առնելով մեր դպրոցի առանձնահատկությունները իրականացնել գիտելիքների ստուգում, թեմատիկ պլանների, խմբակների կատարողականի ստուգում, նպատակային դասալսումներ, անհրաժեշտության դեպքում ուղղորդել ուսուցիչներին, դասամատյանների ստուգում, մեթոդմիավորման արձանագրությունների համապատասխանության ստուգում	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ
6	Մանկավարժական խորհրդի և մեթոդմիավորումների աշխատանքների ճիշտ կազմակերպում	Բոլոր նիստերին անդրադարձ կատարել նախորդ նիստի հարցերին, լրացնել բացթողումները Մեթոդմիավորման միստերի ժամանակ պարբերաբար քննարկել, ըստ դասարանների,տվորողների առարկայական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների ապահովման և փոխադարձ դասալսումների հարցը	2023-2028	Մանկավարժական խորհուրդ, մեթոդմիավորումներ
7	Գիտահետազոտական աշխատանքների	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը	2023-2028	Ուսուցիչներ

	մեջ ընդգրկվածություն	դասագրքերի քննարկման, ստեղծման գործընթացներին, ուղղորդել գիտական հոդվածներ գրելու և օգնել դրանց հրատարակման հարցում		
8	Մանկավարժների խրախուսում	Կատարած աշխատաքների համար՝ սեմինարներ, միջոցառումներ, խրախուսել պատվոգրերով նաև դրամական պարգևներով	2023-2028	Տնօրեն, համակարգող, մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

N	Խնդիրներ	Գործողություններ և միջոցառումներ	Ժամանակացույց	Պատասխանատուներ
1	Մասնակցություն ապահովել բոլոր օլիմպիադաներին և կազմակերպվող առաջնություններին, համապետական նախագծային աշխատանքներին	Ստեղծել խմբակներ, գիտակ մանկավարժների աշխատանքների շնորհիվ պատրաստել մրցունակ և մոտիվացված սովորողներ, հետևողական լինել տարբեր ուսումնական նախագծերում և մրցույթներում ընդգրկվելու հարցում Հետևել տարբեր կիրթական ծրագրերի կողմից հայտարարված միջոցառումներին,	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, մեթոդմիավորումներ, դասղեկներ

		տանել նախապատրաստական աշխատանքներ՝ խմբակների միջոցով կամ առանձին		
2	Աշակերտական խորհուրդի ակտիվություն	Սահմանել հերթապահություն, ներքին կարգապահական կանոնների հետ ծանոթացում և տարածում, ակտիվ մասնակցություն մարզային և համապետական միջոցառումներին, ստեղծել պայմաններ , որպեսզի սովորողները կարողանան հանդես գալ տարբեր առաջարկներով և նախաձեռնություններով, աջակցել ամսագրի ստեղծամը	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեն, խմբակավարներ, մանկավարժներ, դասղեկներ
3	Ազգային, համամարդկային արժեքներ կրող սովորողներ	Կազմակերպել ռազմահայրենասիրական միջոցառումներ, համամարդկային հարցերին վերաբերող սեմինարներ, տարբեր երկրների մշակութային արժեքների մասին դասեր կամ միջոցառումներ, վիկտորինաներ, բանավեճեր և խաղեր	2023-2028	Դասղեկներ, սովորողներ

Աշխատանքային միջավայր

N	Խնդիրներ	Գործողություններ և միջոցառումներ	Ժամանակացույց	Պատասխանատուներ

1	Ճիշտ պլանավորել տարեկան աշխատանքները և վերահսկելի դարձնել յուրաքանչյուր օղակի աշխատանքը	Տարեկան բոլոր աշխատանքային պլանները կազմել այնպես, որտեղ հստակ կերևան պատասխանատուները և կնշվի կոնկրետ կատարման ժամանակացույց: Ըստ ոլորտների կատարել աշխատանքի բաժանում	2023-2028	տնօրեն, փոխտնօրեններ, մեթոդմիավորումներ, դասղեկներ
2	Ճիշտ կազմակերպել ԿԱՊԿՈՒ և կյանքի դժվարին պայմաններում հայտնված սովորողների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում	Կատարել մշտադիտարկումներ դեսղեկների միջոցով, հայտնաբերել դժվարին պայմաններում հայտնված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, անհրաժեշտության դեպքում ՏՄԱԿ-ից հրավիրել մասնագետների՝ խորհրդատվություններ ի համար: ԿԱՊԿՈՒ սովորողների հայտնաբերելու դեպքում, ծնողի համաձայնությամբ ՏՄԱԿ նրանց գնահատելու և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու համար	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, մանկավարժներ, դասղեկներ
3	Ապահովել մշտական համագործակցություն կրթության կազմակերպող և իրականացնող	Առցանց և առկա վերապատրաստումներին ընդգրկել մանկավարժներին և ձեռքբերված գիտելիքները	2023-2028	Տնօրեն, փոխտնօրեններ, մանկավարժական խորհուրդ, մեթոդմիավորումներ

	բոլոր կառույցների հետ	*փոխանցել աշխատանքային թիմին։*		

12.ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր ռիսկերը մեր նպատակներին հասնելու ճանապարհին, քանի որ այդպես հնարավոր կլինի կանխել ոչ ցանկալի արդյունքները և նպաստել նպատակների արագ իրականացմանը։

ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿ	1. խրախուսել ուսուցիչների ձեռքբերումները, ստեղծել պայմաններ դասերն ավելի նպաստավոր իրականացնելու համար։
2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՍԻՎՈՒԹՅՈՒՆ	2. Միջոցառումների, սեմինարների, բանավեճերի և հանդիպումների կազմակերպում
3. ԻՆՔՆԱԿՐԹՎԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՈՒՄ	3.Մանկավարժներին ընդգրկել տարբեր վերապատրաստումների՝ մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու համար,
4.ՖԻՆԱՆՍՆԵՐ	4.փորձել գտնել ֆինանսական միջոցներ և աղբյուրներ.

13. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՆՀԱՏՆԵՐ, ԲՅՈՒՋԵ

Ֆինանսական միջոցներ՝

- Նվիրատվություններ
- Դրամաշնորհներ
- Բարերարներ
- Հովանավորներ
- Ձեռնարկատիրություն

- Լաբորատոր սարքավորումներ և նյութեր
- Դիդակտիկ պարագաներ
- Զարգացնող խաղեր և լրացուցիչ գրականություն
- Ժամանակակից տեխնիկա
- Գրքեր և ուղեցույցներ

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները



Իրենց ներդրումը կարող են ունենալ նաև ուսուցիչները՝ տարբեր խմբակներում դասավանդելով և որոշ տոկոս փոխանցելով դպրոցին: Նախատեսում ենք նաև աշակերտների ներդրումը՝ բարեգործական ցուցահանդեսների իրականացմամբ և սեփական ձեռքի աշխատանքների վաճառքով:

14.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Սովորողները կստանան ժամանակակից և որակյալ կրթություն,

2. կբարձրանա ինքնակրթության մակարդակը, կշատանան հաջողությունները ինչպես աշակերտների այնպես էլ ուսուցիչների շրջանակում,

3. Կբարելավվի ուսուցիչների մասնագիտական և նախաձեռնողական որակները

4. Կբարձրանա համագործակցության մակարդակը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև,

5. Կձևավորվի հոգաբարձուների խորհուրդներ,

6. ՏՀՏ միջոցների լիարժեք ներդրում, տիրապետում և կիրառում դասապրոցեսում

7. Նյութատեխնիկական բազայի հարստացման արդյունքում կկազմակերպվեն հետաքրքիր և որակյալ դասեր,

8. Կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի և իր ընտանիքի վերաբերմունքն ու պատասխանատվության զգացումը,

9. Կձևավորվի 21-րդ դարի մտածող, ստեղծագործ, կարողունակ և արժեհամակարգ կրող քաղաքացի,

10. Կունենաք ևս մեկ հանդերձարան,

11. Կհաստատվի սերտ կապ դպրոցի և ընտանիքի միջև,

15.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի քայլարշավով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է:

Իբրև գնահատման գործիքների պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, պետք հաշվի առնվեն հնարավոր ռիսկերը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Դրան մասնակցում են վարչական ու մանկավարժական աշխատողները, սովորողները ու ծնողները: Ներքին և արտաքին գնահատումը պետք է ուղղորդել մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

ՍՈՒՅՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՆԹԱԿԱ Է ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ Ի ՆՊԱՍՏ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑԻԿ ԱՊԱԳԱՅԻ: